

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/1

2 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Գուրգեն Սարգսյանի 06.11.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕԿՎ 29.10.2014 թ-ի թիվ 1411845 վարչական ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕԿՎ 29.10.2014 թ-ի թիվ 1411845 վարչական ակտով քաղաքացի Գուրգեն Սարգսյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար վերջինիս նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 6.779.040 դրամ:

Նշվեց նաև, որ սույն գործի վերաբերյալ ՀՀ ՖՆ քննչական վարչությունում ստացված նյութերի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով 28.11.2014 թ-ին հարուցվել է թիվ 83167414 քրեական գործը, որը ներկայումս գտնվում է նախաքննության փուլում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83167414 քրեական գործը, անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Գուրգեն Սարգսյանի գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Քաղաքացի Գուրգեն Սարգսյանի 06.11.2014 թ-ի գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ